ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2016թ. թիվ 51-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Լոռու մարզի տարածքում 2016 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Համայնքների 2016թ. բյուջեներում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2016թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն.

2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվա 30-ը ներկայացնել տեղեկատվություններ՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի (տեղեկատվություններն ուղարկել **lorimpv@mail.ru** էլեկտրոնային հասցեին).

3) Մինչև ս/թ մարտի 1-ը կազմել «Համայնքի տարածքում 2016 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման» միջոցառումների պլան և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկ-մանը ներկայացնելու համար.

3. Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝

2016 թվականի ընթացքում պարբերաբար քննարկել «Լոռու մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. փետրվարի 17
ք.Վանաձոր